ՎԱՆԻ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

1915 թ. գարնանը, երբ երիտթուրքերի կառավարությունը սկսեց հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ, տեղի ունեցան հայերի ինքնապաշտպանական մի շարք կռիվներ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում։ Առաջինը զենքի դիմեց Վանի-Վասպուրականի հայ բնակչությունը, ցուցաբերելով անօրինակ հերոսություն և կազմակերպվածություն։

Դեռ 1914 թ. օգոստոսի վերջերին Վանի կուսակալի պաշտոնում նշանակելով իր դաժանություններով հռչակված Ջևդեդ բեյին[1], երիտթուրքերը հրահանգեցին նրան՝ կոտորել ու ոչնչացնել Վան քաղաքի և ամբողջ վիլայեթի հայ բնակչությունը։ Ջևդեթ բեյը խստացրեց հալածանքները հայերի նկատմամբ և մի շարք գավառներում ձեռնամուխ եղավ նրանց կոտորածներին։ 1915 թ. ապրիլի սկզբներին նա ադդեն պաշարել էր Վանը և այնպես էր օղակել հատկապես Այգեստանը, որ «թռչունն անգամ չէր կրնար անցնիլ...»[2]։

Հայերն ամեն կերպ փորձեցին մեղմել իրավիճակը, բայց ապարդյուն։ Նրանց համար հարցն ադդեն պարզ էր. կամ պետք է լուռ ու հնազանդ բնաջնջվեին, կամ պայքարեին ու պահպանեին իրենց գոյությունը։ Ուրիշ ելք չկար։ Եվ նրանք ընտրեցին վերջինը։ Ինքնապաշտպանության գործը ղեկավարում էին տարբեր կուսակցությունների ու հոսանքների ներկայացուցիչներ՝ Առամ Մանուկյանը, Արմենակ Եկարյանը, Գաբրիել Սեմերջյանը, Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Հրանտ Գալիկյանը, Փանոս Թերլեմեզյանը։

Ապրիլի 5-ին կազմվում է «Վասպուրականի հայ ինքնապաշտպանության գինվորական մարմին», որին կից շուտով ստեղծվում են նրան ենթակա ստորաբաժանումները՝ տեղեկատու դիվանը, հաշվառման խումբը, զինաբաշխ մարմինը։ Հերոսամարտի ընթացքում հիմնվում են նաև հայթայթիչ, պարենավորման, կարմիր խաչի, զենքերի մթերման ու մատակարարման խմբերը, Վասպուրականի հայ կանանց միությունը, ոստիկանական վարչությունը, քաղաքապետարանը, դատարանը և այլն։ Դրանց բոլորի ստեղծումն ավարտվում է հերոսամարտի «երրորդ օրը...»[3], այսինքն՝ մինչև ապրիլի 10-ը։

Թշնամու դեմ պայքարի դուրս եկան Վանի ամբողջ հայությունը՝ ծերերն ու երիտասարդները, պատանիներն ու երեխաները, տղամարդիկ ու կանայք, ձեռնարկատերերն ու բանվորները, արհեստավորներն ու առևտրականները, մտավորականներն ու պաշտոնյաները։ Փ. Թերլեմեզյանը գրում էր. «Վանի հայությունը... համոզվեց, որ թուրք կառավարությունը վճռել է ամբողջովին բնաջնջել մեր ցեղը։ Ուրեմն կռվելն անխուսափելի դարձավ»։ Նա «չուզեց իր վիզը դնել թուրքական յաթաղանի դիմաց և վճռեց կռվել։ Որովհետև հերոսա-

---

1 *Ջևդեթ բեյի դաժանություններն ու եղեռնագործությունները հասնում էին այն աստիճանի, որ նա պայտում էր մարդկանց։ Դրա համար էլ Վասպուրականի բնակիչները նրան անվանում էին «նալբանդ կայմակամ» (տե՛ս Հայաստանի պետական պատկերասրահ, հուշագրաձեռագրային բաժին, ֆ. 30, ինվենտար 423, թ. 420, Փանոս Թերլեմեզյանի հուշերը. այսուհետև՝ ՀՊՊ)։*

2 *«Վարագ», բացառիկ՝ նվիրված Մեծ եղեռնի և Վանի հերոսամարտի 50-ամյակի տարեդարձին, 1915—1965, էջ 107 (հրատարակության տեղն ու թիվը չեն նշված)։ Օն. Մխիթարյան. Վանի հերոսամարտը. Սոֆիա, 1930, էջ 37։*

3 *ՀՊՊ, ֆ. 30, ինվ. 423, թ. 411։*

կան կյանքը թե՛ պատվավոր և թե՛ պարտավորիչ էր»։ Վանեցիները գործում էին՝ «դեղ կանգնի, գերան կկոտրվի» համոզմունքով։ «Այդ գերան կոտրող դյուղը, այսինքն՝ ժողովուրդը, առանց բացառության կռվի էր կանգնել»։

Մի այլ առիթով Փ. Թերլեմեզյանը նշում էր, որ հերոսամարտը «բացարձակ ժողովրդական պատերազմ էր», որ դա «այս ու այն կուսակցությանց և անհատներու վերագրելը հիմնովին թյուրիմացություն մ'է. ամենքն իրենց բաժին աշխատանքն ունեցան և ուս ուսի կռվեցան։ Պատիվ այդ անընկճելի ժողովրդյան, որ հայի պատիվն ու մեր կյանքն աղատեց»[5]։

Ի՞նչ ուժեր ունեին կռվող կողմերը։ Վանի բնակիչները հիմնակսնում արհեստավորներ ու առևտրականներ էին։ Զեռնարկատերերն ու բանվորները դեռ փոքրաթիվ էին։ Կային ավելի սակավաթիվ մտավորականներ, պաշտոնյաներ, հողատերեր և այլ զբաղմունքի մարդիկ։ Պատերազմի նախօրյակին քաղաքն ուներ մոտ 41 հազ. բնակիչ, որից 23 հազարը հայ, իսկ 18 հազարը՝ մահմեդական։ Վանը բաժանվում էր երկու մասի. մեկը կոչվում էր Քաղաքամեջ, իսկ մյուսը՝ Այգեստան։ Նրանք իրարից հեռու էին 5—6 կմ, և այդ տարածքում ապրում էին մահմեդականներ, գերազանցապես թուրքեր։ Այգեստանն ուներ 20 հազար, իսկ Քաղաքամեջը՝ 3000 հայ։ Ընդհանուր բնակչությունը առաջինում կազմում էր 37000, երկրորդում՝ 4000 մարդ[6]։

Ջևդեթ բեյն ուներ 6000 զինվոր կանոնավոր զորքից, 5000—6000 համիդիական քրդեր և այլ ուժեր, 12 լեռնային ու ծանր հրանոթ, բազմաթիվ հրացաններ ու փամփուշտներ։ Իսկ հայերն ունեին 800 զինվոր, որից 400-ը հրացաններով, իսկ մնացած 400-ը մաուզեր-ատրճանակներով[7]։ Երբ Թիմարից, Հայոց Ձորից և այլ վայրերից հայերը. փրկվելով կոտորածներից, նահանջեցին դեպի Վան, զինվորների թիվը մեծացավ, հասնելով 1053-ի։ Աճեց նաև հրացանների ու ատրճանակների թիվը, կազմելով համապատասխանաբար 505 և 549։ Այնուամենայնիվ թշնամու ուժերի համեմատությամբ դրանք աննշան էին։ Անբավարար էր նաև հայերի փամփուշտների պաշարը։ Նրանք ունեին 74824 հրացանի և 39089 ատրճանակի փամփուշտ[8]։

Ահա այդպիսի խիստ անհավասար ուժերով էին բախվելու հակառակորդները, մեկը կոտորելու, բնաջնջելու մտադրությամբ, իսկ մյուսը դիմադրելու, գոյատևելու և ապրելու հաստատ վճռականությամբ։

Ապրիլի 5-ին Զինվորական մարմինը հղեց երկու կոչ, մեկը՝ Այգեստանի հայերին, որի մեջ ասվում էր. «Մեր նամարտ թշնամիի անհանդուրժելի պահանջներուն տեղի տալը անկարելի ըլլալով և մանավանդ դառն փաստերով համոզված ըլլալով, որ նա իր հայաջինջ դիվային ծրագիրը անպայման իրագործել կուզե, ուստի, հակառակ մեր խաղաղասիրական ջանքերուն և զգացումներուն, պարտավորվեցինք ակամա կռվի ասպարեզ դուրս գալ, պաշտպանելու համար մեր ազգային գոյությունը, չխնայելով մեր արյան վերջին կաթիլը»[9]։

Կոչերից մյուսն ուղղված էր Այգեստանի թուրքերին և կրում էր «Թուրք հայրենակիցներ» վերնագիրը։ Նրանում ասվում էր, որ արյունռուշտ կուսա-

---

4 ՀՊՊ, ֆ. 30, ինվ. 423, թ. 405, 407, 412։ Փ. Թերլեմեզյանը գրում է, որ հերոսամարտի նախօրյակին, երբ իրեն հայտնեցին, որ «դուք ընտրված եք զինվորական ժամանակավոր կառավարության անդամ», «ես, իհարկե, ուրախությամբ ընդունեցի այդ առաջարկը։ Անմիջապես վրձիններս փակեցի տուփիս մեջ և նրանց փոխարեն հրացանս վերցնելով՝ վազեցի կենտրոն և սկսեցի կատարել պարտականություններս հանդեպ իմ անիրավված ժողովրդին, դի ես ապրում էի և ապրում եմ նրա հետ և նրանով»։

5 Ա. Դարբինյան. Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր 1890-էն 1940). Փարիզ, 1947, էջ 326։

6 Տե՛ս Ա-Դո. Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թթ., Երևան, 1917, էջ 222։ Ա. Դարբինյան. նշվ. աշխ., էջ 272, «Վարագ», բացատրիկ, էջ 118։

7 Տե՛ս Օն. Մխիթարյան. նշվ. աշխ., էջ 65։

8 Տե՛ս Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնհինգամյակի առթիվ, 1915—1930. Վենետիկ, Ս. Ղազար, 1930, էջ 30։

9 Օն. Մխիթարյան. նշվ. աշխ., էջ 54։

կալը ուզում է կռվեցնել մեզ և քաղաքը լողացնել վանեցիների արյան մեջ։ Գիտեցեք, որ նա օտար մարդ է, այսօր կա, վաղը՝ չկա։ Իսկ մենք և դուք Վանի մշտական բնակիչներ ենք, ապրել ենք անվրդով, բարի հարևանությամբ և կապրենք խաղաղ։ Եթե դուք լսեք կուսակալին, «երկու ազգերուն միջև ահարկու անդունդ մը բանալուն օգնած կըլլաք»[10]։ Ուստի գանց առեք Ջևդեթ բեյի գործակալների քարոզները, մի ընկեք նրա լարած թակարդը։ Եղել են ժամանակներ, որ մենք ենք օգնել ձեզ, այժմ դուք, գոնե ձեր շեզոքությամբ, օժանդակեցեք մեզ։ Այդ կոչի նշանակությունն այն եղավ, որ Վանի թուրքերը չմասնակցեցին կռիվներին[11]։

Ապրիլի 6-ի գիշերը Զինվորական մարմինը հրավիրեց կռվող ուժերի բոլոր ղեկավարների խորհրդակցություն և գոտեպնդեց նրանց օրհասական պայքարի համար։ Ոգևորիչ էր հատկապես Գրիգոր Բուլղարացու ճառը։ «Ընկերներ,— ասում էր նա,— հասել է րոպեն, որ մենք վերջնական հաշվեհարդար կատարենք մեր դարավոր թշնամու հետ... Մեր առջև կանգնած է մեր թշնամին, որ անհամեմատ ուժեղ է մեզանից, բայց նրան պակասում է այն բարոյական ուժը, որ մենք ունինք. դա՝ մեր մեռնելու պատրաստակամությունն է։ Մեզ համար ուրեմն այս կռիվը մեկ նշանաբան պիտի ունենա— մեռնել միայն մեր դիրքերի վրա։ Քաջությամբ պիտի կռվինք և մեր մահը սուղ նստեցնենք թշնամուն։ Մեր ընտանիքի պատիվը պահանջում է մեզանից, որ թշնամին մեր դիակների վրայից անցնելուց հետո մեր օճախները ոտք դնի... լավագույնն է սեփական մահը տեսնել, քան սիրելիների խողխողումներն ու անպատվությունը... եթե ամեն մեկ զինվոր հավատարիմ մնա իր նշանաբանին, աներկբա եղեք, որ հաղթությունը մեզ կմնա»[12]։

Ապրիլի 7-ի վաղ առավոտյան երկու հայուհիներ Շուշանցից իջնում էին Այգեստան։ Թուրք զինվորները փորձեցին առևանգել նրանց։ Հայերը նետվեցին իրենց դիրքերից և կամեցան փրկել կանանց։ Թուրքերը կրակեցին և սպանեցին աղատարարներին։ Հայերը պատասխանեցին փոխադարձ կրակով։ «Ահա այդպես սկսվեց Վանի դյուցազնական կռիվը»[13],— գրում է Փ. Թերլեմեզյանը։ Մարտն սկսվեց բոլոր դիրքերից համարյա միաժամանակ։ Որոտում էին թշնամու թնդանոթները, ավերում հայկական դիրքերը, խաղաղ բնակիչների տներն ու այգիները, սուլում էին նրա հրացանների գնդակները, սփռում ամենուր սարսափ ու մահ։ Ականատեսը գրում էր. «Անհնարին է փողոցով անցնիլ։ Ամեն քայլափոխը կապված է մեծ վտանգի մը հետ։ Ոչ միայն հրացանի գնդակները կսողան անվերջ, այլև թնդանոթների հարվածները որոտալով կպայթին բարդիներու գլխուն և կցրվին փողոցի երկայնքի ու լայնքի վրա»[14]։ Որոշ տեղերում թշնամու հրացանների գնդակները թափվում էին կարկուտի նման և ծուխն ու վառոդի հոտը լցնում հայկական դիրքերը։ Բայց հայերը կանգնած էին իրենց դիրքերում կայուն ու անսասան և պատասխանում էին թշնամուն պատշաճ հակահարվածներով։ Կռվի սկզբում խուճապի ենթարկվեցին միայն կանայք ու երեխաները, որոշ տեղերում բարձրացնելով նույնիսկ լաց ու կոծ։ Սակայն շուտով նրանք ընտելացան առօրյային և սկսեցին գործուն մասնակցություն ցուցաբերել հերոսամարտին։

Ահեղ մարտերը ծավալվում են ամբողջ օրը և նոր ուժով բորբոքվում գիշերը։ Ապրիլի 8-ին հայերին հաջողվում է հրդեհել անգլիական հյուպատոսության շենքը, ուր ամրացել էին թուրքական ժանդարմներն ու զինվորները և լրջորեն նեղում էին իրենց։ Այդ ամրոցի ոչնչացումից հետո «հայ տասնյակ մը դիրքեր որոշ չափով ազատ շունչ կքաշեն»[15]։ Զինվորական մարմինը ստեղծում է «Պատվո խաչ» շքանշան և պարգևատրում քաջերին։ Ապա կոչ է անում «խնայել փամփուշտները», քանզի պաշարը քիչ է, իսկ ապագան՝ անորոշ։

10 Նույն տեղում, էջ 71։

11 Տե՛ս Ա-Դ ո. նշվ. աշխ., էջ 241—242։

12 Վասպուրական..., էջ 34։

13 ՀՊՊ, ֆ. 30, ինվ. 423, թ. 404։

14 Օ ն. Մ խ ի թ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 72—73։

15 Նույն տեղում, էջ 85։

Ապրիլի 9—10-ը ամրաշեն բանվորները, Գրիգոր Բուլղարացու մտահղացումով և գլխավորությամբ, կատարեցին մի նոր սխրագործություն՝ հրդեհեցին Համուա աղայի զորանոցը, ուր հաստատված անվրեպ կրակող չերքեզները անդադրում սարսափի տակ էին պահում հայերին։ Ապա նրանք գնդակոծեցին զորանոցից փախչող զինվորներին։

Ջևդեթ բեյը գազազում է։ Նա հայտարարում է, թե ինքնապաշտպանները՝ «պիտի առնեն իրենց արժանի պատիժը», «պիտի ճզմվին», պիտի ոչնչանան թուրք ջոկատների կողմից, ինչպես Շատախում, պիտի շարունակվեն նրանց դեմ հարձակումներն ու ոմբակոծումները, մինչև որ հանձնեն իրենց զենքերը և հայտնեն բացարձակ հնազանդություն[16]։

Սակայն Զինվորական մարմինը, արհամարհելով կուսակալի սպառնալիքներն ու հոխորտանքները, արիաբար շարունակում էր ղեկավարել հերոսամարտը։ Ա. Եկարյանը, Փ. Թեոլեմեզյանը, Գ. Բուլղարացին և ուրիշներ գնդակների տարափի տակ անցնում են դիրքից դիրք և ոգևորում մարտիկներին։

Ապրիլի 12—13-ը մարտերը բորբոքվեցին նոր ուժով։ Թշնամին, ստանալով համալրումներ, ոմբակոծում էր և անխնա ու դաժան քանդում հայկական ամրությունները, ավերում խաղաղ ու շեն տները։

Ապրիլի 15-ին Զինվորական մարմինը նամակ ուղարկեց Կովկասյան ռուսական իշխանություններին։ Նկարագրելով իրավիճակը, նա նշում էր. «Ամեն օր սպասում ենք ռուսական օգնությանը։ Խնդրում ենք շտապել։ Հետո ուշ կլինի»[17]։

Ապրիլի 16-ին թշնամին ավելի սաստկացրեց կրակը։ Նրա թնդանոթները համարյա ամբողջ օրը խփում էին հայերի դիրքերին ու ամրոցներին։ Հակառակորդը «սալավաթ» գոռալով մի քանի անգամ գրոհի նետվեց։ Սակայն ջարդվելով ետ շպրտվեց։ Նա գործի դրեց հեծելազորը, բայց հայերը, սպանելով նրանց գնդապետին ու 40 հեծյալների, անխախտ պահեցին իրենց դիրքերը[18]։

Ջևդեթ բեյը հերոսամարտի սկզբում հայտարարել էր, որ 2—3 օրում կամայացնի Այգեստանը և կբնաջնջի բոլոր հայերին, բայց արդեն անցել էր 10 օր, չէր կարողանում անգամ խաթարել հայերի դիրքերը, ընդհակառակը, ինքն էր տուժում, տալով նորանոր զոհեր։

Ապրիլի 19-ին նա անցավ նոր հարձակման։ Թեժ կռիվները շարունակվեցին նաև հաջորդ օրը։ Իսկ ապրիլի 21-ին այդ կռիվները հասան իրենց գագաթնակետին։ Նրանք, ինչպես արձանագրում էր ականատեսը, «իրենց կատաղությամբ ո՛չ նախընթաց ունեին և ո՛չ էլ այլևս կոկնվեցան»[19]։ Թշնամին հաջողության հասնելու համար շատ ճիգ ու ջանք թափեց։ Նրա թնդանոթները անընդհատ որոտում էին, գցելով օրական 400 ռումբ, իսկ զինվորները յուրաքանչյուր ժամում արձակում էին մինչև 10000 փամփուշտ[20]։ Որոշ տեղերում թուրքերը դուրս էին գալիս իրենց դիրքերից ու նետվում սվինամարտի։ Չկարողանալով հասնել արդյունքի, կուսակալն ու նրա համախոհները էջմիածնից հրավիրեցին գերմանացի զինվորական-մասնագետ։ Բայց սա, գործադրելով իր ամբողջ շնորհքը, նույնպես մնաց ձեռնունայն և ստիպված հեռացավ Վանից, հայտարարելով, թե ինքնապաշտպաններից «ես չէի սպասում այդպիսի դիմադրություն»[21]։

Եվ իրոք, հայերի դիմադրությունը անհաղթահարելի էր, չտեսնված էր։ Նրանց ամրաշեն խմբերը, աշխատելով գիշեր ու ցերեկ, զարմանալի արագությամբ ու ճարպկությամբ վերականգնում կամ վերանորոգում էին թշնամու կողմից ավերված դիրքերը։ Մարտիկները դիպուկ կրակոցներով գետին էին տապալում երևացող հակառակորդներին կամ սվինամարտի բռնվելով, ոչնչաց-

16 Նույն տեղում, էջ 164—173։

17 Геноцид армян в Османской империи, под. ред. М. Г. Нерсисяна. Ереван, 1982, с. 281.

18 Տե՛ս Օն. Մխիթարյան. նշվ. աշխ., էջ 143։

19 Նույն տեղում, էջ 146։

20 Նույն տեղում, էջ 150։ «Վարազ», բացառիկ, էջ 120—121։

21 Анрн Барби. В стране ужаса. Мученица Армения. Тифлис, 1919, с. 76.

նում էին նրանց. հրկիզողները հանկարծակի հայտնվում էին թուրքերի թիկունքում և այրում նրանց շենքերն ու ամրությունները։

Հերոսամարտը հերոսներ էր ծնում։ Արամ Պողոսանճյանը, արհամարհելով վտանգը, երեք անգամ բարձրացավ սանդուղքների վրա և զգալի վնաս պատճառեց թշնամուն։ Նա կամեցավ շարունակել այդ սխրագործությունը, բայց ընկավ հակառակորդի գնդակից։ Մանդանցի Սահակը սպանեց 3 զինվոր և թույլ չտվեց, որ հակառակորդը տանի նրանց դիակները։ Երբ մթնեց, նա սողեսող մոտեցավ ընկածներին և բերեց նրանց հրացաններն ու փամփուշտները[22]։

Տղամարդկանցից ետ չէին մնում կանայք։ 19-ամյա Իսկուհի Համբարձումյանը (Սևո) կրակի տակ թափանցում էր թշնամու թիկունքը, հետախուզում և տեղեկություններ էր բերում, փամփուշտներ էր մատակարարում, վերքեր էր կապում և ուտելիք հասցնում։ Հետախուզության գնալիս նա իր ատրճանակը տալիս էր եղբորը, որ չընկնի թշնամու ձեռքը։ Հաճախ նա հրաշքով էր փրկվում հակառակորդի գնդակներից։ Իր սխրագործությունների համար Սևոն պարգևատրվեց «Պատվո խաչ» շքանշանով[23]։ Նրա նման էին գործում նաև ուրիշ հայուհիներ։

Հերոսություն էին կատարում անգամ պատանիներն ու երեխաները։ Նրանք սրագորեն նետվում էին թշնամու արձակած ռումբի վրա, արհամարհելով մահը, վնասազերծում էին այն և հանձնում զինագործներին, որոնք արկի վառոդը օգտագործում էին փամփուշտներ պատրաստելու համար։ Երեխաները պատերից պոկում էին թշնամու հրացաններից արձակված գնդակները և տալիս նույնպես զինագործներին, որոնք օգտագործում էին դրանք դարձյալ փամփուշտներ պատրաստելու համար[24]։ Երբեմն պատանիներից ոմանք կատարում էին ավելի խիզախ գործեր։ 14-ամյա Արամը հրկիզեց ֆրանսիական հյուպատոսության շենքը, ուր խրամատավորվել էին թուրք զինվորները[25]։

Հերոսամարտը պահանջում էր նվիրվածություն, անձնազոհություն և զոհաբերություն։ Եվ վանեցիները սիրով կատարում էին այդ բոլորը։ Այգեստանի դիրքերից մեկում 9 հոգի կռվում էին խիզախորեն, վախենալով ոչ թե մահից, այլ փամփուշտների սպառումից։ Թշնամին ոմբակոծեց և ավերեց նրանց դիրքը։ Մարտիկները ոչ թե նահանջեցին, այլ ընկան ավերակների վրա ու շարունակեցին կռիվը։ Վեց օր նրանք անքուն ու սոված մարտնչում էին, մինչև որ Զինվորական մարմինը նրանց փոխարինեց ուրիշներով[26]։

Փ. Թերլեմեզյանը դիրքերը շրջելիս տեսնում է կրակի մոտ նստած մի երիտասարդի, որ սաստիկ հիվանդ էր։ Երբ Թերլեմեզյանը առաջարկում է՝ գնա քնի, այս գիշեր քո փոխարեն ես կմնամ այստեղ, նա հրաժարվում է, ասելով՝ չէ ախպեր, լավ է էստեղ կռվում սպանվիմ, քան թե տանը իմ անկողնում մեռնիմ[27]։

Հերոսամարտի մասնակիցներից մեկը կռվում էր իր միակ տղայի հետ միասին։ Նրա տղան զոհվում է իր աչքերի առաջ։ Հայրը որդու դիակը դնում է մի կողմ և շարունակում կռիվը։ «Ամբողջ 24 ժամ,— նշում է Փ. Թերլեմեզյանը,— առանց ուտելու, խմելու, դիրքին մեկ անկյունը դարանի մտած, ան կաշխատեր իր տղուն վրեժը լուծել»[28]։

Մարտերում զոհված Եղիայի մայրը մի այծ ուներ միայն։ Նա տանում է իր այծը կռվողների դիրքերը, «կթում և աղաչում էր ռազմիկներին խմել»[29]։ Մի պառավ կին պուլիկը մի ձեռքին, թասը մյուսին, գինի էր հրամցնում ռազմիկներին, միաժամանակ տալով նրանց խորոված ձուկ։ Բեռնակիր Մուկուչը

---

22 Տե՛ս Ա. Եկարյան. նշվ. աշխ., էջ 219։

23 Տե՛ս ՀՊՊ, ֆ. 30, ինվ. 423, թ. 418։

24 Տե՛ս ՀՊՊ, ֆ. 30, ինվ. 423, թ. 410։ «Վարագ», բացառիկ, էջ 117։

25 Տե՛ս Ա. Եկարյան. նշվ. աշխ., էջ 205։

26 Տե՛ս «Վարագ», բացառիկ, էջ 116։

27 ՀՊՊ, ֆ. 30, ինվ. 423, թ. 414։

28 ՀՊՊ, ֆ. 30, ինվ. 423, թ. 198։

29 Նույն տեղում, թ. 409։

իր միակ անկողինը տանում է խրամատները, որ «կովողները փաթաթվին ու տաքանան»[30]։ Եվ այդպիսի օրինակներ շատ կարելի է բերել։

Հերոսամարտի ընթացքում եռանդուն կերպով դրսևորվեցին ու ծավալվեցին Վանի հայության ստեղծագործական կարողությունները։ Մարդկանց միտքն ուղղված էր այն բանին, թե ինչ միջոցներ հնարեն թշնամուն ավելի հաջող դիմադրելու, ավելի լավ հարվածելու և ջախջախելու համար։ Բուլղարացի Գրիգորի մտահղացումով ու եռանդուն ջանքերով Մարգար Ղարիբջանյանի դարբնոցում ապրիլի 21-ին ձուլվեց «Հայկական թնդանոթը»։ Ջևդեթ բեյը երբ լսեց նոա ձայնը, սարսափեց, կարծելով, թե ռուսական զորքերն արդեն մտել են Վան և ուր որ է կհայտնվեն իր առջև[31]։ Այդ թնդանոթը թեև մեծ դեր չխաղաց, բայց, ինչպես իրավամբ նշում էր Ա-Դոն, դարձավ «Այգեստանի ռազմական ոգու սիմվոլը, պայքարող ժողովրդին նա ներշնչում էր և՛ ոգևորություն, և՛ հույս»[32]։

Վանի նշանավոր փականագործ վարպետ Փանոսի արհեստանոցում նրա աշակերտները նորոգում էին վնասված զենքերը։ Բայց շուտով նրանք սկսեցին պատրաստել նաև փամփուշտներ՝ օրական 2000 հատ[33]։ Հումքը բերում էին քաղաքացիները։ Այգեստանի գրեթե ամեն տուն «իր սեփական ինքնաեռը, ամանեղենները և այլ կարգի իրերը ինքնակամ կբերեին նվիրելու «սուրբ գործին»[34]։ Ոսկերիչներ ու փորագրիչներ Գ. Գյումճիպաշյանը, Հ. Կաքավյանը, Վ. Պապիկյանը և Ռ. Տուտիկյանը սկսեցին վառոդ պատրաստել և մատակարարել զինագործներին[35]։ Նրանց արհեստանոցում աշխատում էր 50 մարդ։ Հայերը ստեղծեցին նաև հրկիզող ու պայթեցնող մի սարք, որը կոչեցին «թուլումբա» մեքենա։ Դրանով նրանք այրում և ավերում էին հակառակորդի դիրքերն ու ամրությունները։ Եռանդով էր գործում հատկապես Լեռ Կամսարը (Արամ Թովմասյան)[36]։

Այգեստանի համարյա բոլոր ջրաղացները մնացել էին թշնամու ձեռքում։ Սակայն հայ վարպետները կարճ ժամանակամիջոցում վերանորոգեցին հները ու կառուցեցին նորերը և լուծեցին սննդի հարցը։ Իրավ է, ինքնապաշտպանների սնունդը խիստ աղքատիկ էր՝ օրական մի հաց (150—200 գրամ), հաճախ նաև պակաս, բայց կանոնավորված ու կարգավորված էր։ Ամբողջ ամսվա մեջ համարյա չեղան շարաշահումներ կամ խախտումներ։ «Քաղաքի ամեն մի տուն,—հուշագրում է Ե. Խալեյանը,—ամեն մի ընտանիք սննդամթերք էր ուղարկում դիրքերը՝ իր հարազատներին, նրանց մարտական ընկերներին»[37]։

Վանի նշանավոր դպրոցներից մեկի հայոց լեզվի ու պատմության դասատու Հովհաննես Մկրտչյան-Կյուլօղլյանը հիմնադրեց «ֆանֆար» նվագախումբը, որը հայրենասիրական ու ազատասիրական երգեր նվագելով ոգևորում էր հայ մարտիկներին դեպի կռիվ և հաղթանակ։ «Վան-Տոսպի» թղթակից Մ. Տ. Սահակյանը գրում էր. «Ամբողջ կռվի ընթացքին՝ հայկական ֆանֆարը շեփորեց վրեժի, պատվի և հաղթանակի ռազմերգեր։ Ամենածանր վտանգների ժամանակ՝ նա ռազմիկներուն օգնության հասավ, երիտասարդները հուզեց, մայրերուն աչքերեն արցունքներ քամեց և պահեց հայուն ոգին անընկճելի, մինչև հաղթանակի վերջին օրը»[38]։ Ջևդեթ բեյը, չկարողանալով թաքցնել

30 Նույն տեղում, թ. 413։

31 Տե՛ս Օ ն. Մ խ ի թ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 110։

32 Ա-Դ ո. նշվ. աշխ., էջ 342։

33 Տե՛ս Օ ն. Մ խ ի թ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 109։

34 Նույն տեղում։

35 Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 275։

36 Տե՛ս Օ ն. Մ խ ի թ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 96—97։

37 Ե. Խ ա լ ե յ ա ն. Իմ կյանքը (համառոտ կենսագրություն). Երևան, 1925, էջ 139։ Օգտագործվել ենք ձեռագրից, որ պահվում է հեղինակի մոտ։

38 «Վան-Տոսպ», 1916, № 22—23։ Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 324։

իր բարկությունը, բացականչում էր. «Նրանք իրենց երաժշտությամբ ինձ կհասցնեն կատաղության»[39]։

Ընդհանրապես պետք է նշել, որ հայերի ստեղծագործական եռանդն ու ապատասիրական ձգտումները, թշնամուն հաղթելու բուռն ցանկությունը օրըստօրե բորբոքվում ու ծավալվում էին։ Գերմանացի ականատեսներից մեկը ստիպված էր խոստովանել. «Ինչ կենսունակ մարդիկ են սա հայերը. մենք քանդելով, անոնք շինելով, չկրցանք իրենց հասնիլ»[40]։

Ապրիլի 21-ին Ջևդեթ բեյի կազմակերպած վճռական և ուժեղ գրոհը նույնպես ձախողվեց։

Անհաջողության մատնված կուսակալը ինքնապաշտպաններին նեղելու համար դիմեց այլ միջոցի. Վանի շրջակա գավառներում դեռ ողջ մնացած հազարավոր հայ գյուղացիների բերեց լցրեց Այգեստան, նպատակ ունենալով առաջացնել սով ու համաճարակ։ Ականատեսն այդ առթիվ գրում էր. «Չկար ավելի զարհուրելի պատկեր, քան պատկերը այդ գաղթականության։ Հայոց Զորի, Արճակի, Թիմարի, Խոշաբի և Վանի արվարձաններուն մեջ լքված թշվառության այդ բեկորները, թուրքական ոստիկաններու հատուկ խնամքով, մեկիկ մեկիկ և տասնյակներով, հավաքված էին և իբրև սովի ու համաճարակի միկրոպներ դեպի Այգեստան քշված...»[41]։

Սակայն կուսակալը դառնորեն սխալվեց։ Զինվորական մարմինն այդ բոլոր տարաբախտներին ընդունեց և իր սուղ միջոցներից բաժին հանեց նրանց։ Ապաստեկվորներին զետեղեց տարբեր խմբերում և ավելի խտացրեց իր շարքերը։ Հոգանակիրներին էլ տեղավորեց ռազմական դիրքերում։ Արդյունքը եղավ այն, որ ինքնապաշտպաններն այժմ ավելի զորեղացան։

Ապրիլի 28-ին թշնամին նոր գրոհ կազմակերպեց։ Նրա հրանոթները, գընդացիրները վերսկսեցին ռմբակոծել ու կրակ թափել հայկական դիրքերի վրա։ Գրավելով Շուշանցն ու Վարագը, թուրքերը փորձեցին ներխուժել Այգեստան։ Նրանք կարողացան քանդել մի քանի դիրքեր և մերկացնելով սրերն ու սվինները, նետվեցին հայերի վրա։

Սակայն հայերը հերոսաբար դիմադրեցին։ Նրանք հրազենով, երկաթներով, մահակներով ու քարերով ետ էին շպրտում թշնամուն, փախուստի էին մատնում նրան։ Կռիվը գնալով շիկանում էր, դիրքերը ձեռքից ձեռք էին անցնում։ Հայերը յուրաքանչյուր տուն ու փողոց վեր էին ածել ամրոցի, իսկ ավերված դիրքերը վերականգնում էին։ Նրանք որոշել էին մնալ, բայց չհանձնվել ատելի թշնամուն[42]։

Համառ պայքարով հայերը կարողացան պահպանել իրենց դիրքերը։ Թուրքերից զոհվեցին 25 մարդ և համարյա նույնքան էլ վիրավորվեցին։ Բայց հայերի կորուստներն էլ պակաս չէին։ Նրանց դիրքերն ու ամրությունները երբեք այդքան քանդված ու ավերված չէին եղել, ինչպես այդ ժամանակ։

Ապրիլի 29-ին թշնամին լռեց։ Սակայն հայերը զգաստ էին։ Նրանք ենթադրում էին, որ հակառակորդի բանակում ինչ-որ բան է կատարվում, սպասում էին, թե նա վերստին հարձակման կանցնի։ Եվ իրոք, մայիսի 3-ին Ջևդեթ բեյը վերսկսեց թնդանոթաձգությունը։ Ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ հակառակորդը կրակն ավելի էր ուժեղացնում գիշերը, քանզի վախենում էր, թե հայերը կարող են օգտագործել խավարը և նվաճել նոր դիրքեր[43]։ Այդ ռմբակոծումների հետևանքով թուրքերը սպանեցին 30 անզեն տղամարդ, կին ու երեխա և վիրավորեցին շատերին[44]։

Բայց դա մահապարտի վերջին ճիչն էր։ Ռուսական զորամասերն ու հայկական կամավորական խմբերը, ջախջախելով թուրքական ուժերին ռազմաճա-

---

39 Анри Барбин. Указ. соч., с. 75.

40 Ա. Ենկարյան. նշվ. աշխ., էջ 105։

41 Օն. Մխիթարյան. նշվ. աշխ., էջ 161։

42 Տե՛ս Ե. Խալեյան. նշվ. աշխ., էջ 133—134։

43 Տե՛ս նույն տեղում, էջ 137—138։

44 Տե՛ս Օն. Մխիթարյան. նշվ. աշխ., էջ 200։ Ա-Դ ո. նշվ. աշխ., էջ 358։

կատում, արագորեն շարժվում էին դեպի Վան։ Ուստի աղյունարբու կուսակալը հարկադրված եղավ թողնել քաղաքի պաշարումն ու փախչել։

Հայերը ցնծության մեջ էին։ Նրանք զվարճանում և ուրախանում էին իրենց հաղթանակով, հրճվում էին թշնամու պարտությամբ ու փախուստով։ Զինվորները դուրս եկան դիրքերից, այրեցին թշնամու Թոփրակ-կալե և Հաճի Բեքիրի զորանոցները, որոնց բոցերը դառնալով հայոց խիզախության ջահերը, ավելացում էին նրանց հաղթանակը։ Ապա մարտիկները գրավեցին Ջևդեթի որջը, ուր գտան մայիսի 3-ին իտալական հյուպատոսության գործակալ Գ. Սբորդոնիին ուղղված նրա նամակը, որտեղ նշում էր, թե «պատերազմական հարկադրությանց պատճառով քաղաքը կթողում»[45]։

Մայիսի 5-ին Վան մտան հայ կամավորական խմբերը և ռուսական զորամասերը՝ գեներալ-մայոր Նիկոլաևի ու գեներալ-մայոր Թ. Նազարբեկյանի գլխավորությամբ[46]։ Անրի Բարբիի վկայությամբ, նրանք հասան ճիշտ ժամանակին, քանի որ ինքնապաշտպանների սննդամթերքն ու ռազմական պաշարն արդեն սպառվում էին[47]։

Մայիսի 6-ին «Վասպուրականի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմինը» կոչ հղեց հայ ժողովրդին, որի մեջ ասվում էր. «Ամսօրյա պայքարը, զոր տարանք փառքով ու պատվով, այսօր իր կատարելության մեջ կվայելենք ահա մեր հաղթանակներով... Մեր զինվորների արի և անսասան դիմադրությունը... թշնամիին զգացնել տվավ, որ մեր երակներուն մեջ չէ դադրած, կհոսի տակավին արյունը ազատության և կռվի... Այժմ փախչում է այն թշնամին, որ հարյուրավոր տարիներ մեզ թալանել, կողոպտել ու խաչել է... Մեր հերոսական կռիվներով մենք արդեն հիմը դրինք այն հոյակապ ազատության, որուն երազեցին մեր հանճարները... որու համար երեսունամյա կռիվներով միլիոնավոր կյանքեր զոհաբերեցինք և որու առաջին արշալույսը կծագի ահա բախտավոր Վասպուրականի հպարտ լեռներու վրա...

Այսօր ուրեմն տոնն է ոչ միայն մեր ամսօրյա պայքարին և հաղթանակներուն, այլև նախատոնը հայկական ազատության՝ բոլոր բռնավոր լուծերեն, բոլոր հոշոտող ճիրաններեն...»[48]։

* * *

1915 թ. ապրիլին, Այգեստանից անկախ ու կտրված հերոսամարտ բռնկվեց նաև Վանի Քաղաքամիջում, որը քաղաքի ու վիլայեթի վարչական կենտրոնն էր։ Այստեղ էին տեղավորված պետական հիմնարկները՝ ոստիկանությունը, զորանոցը, դատարանը, բանտը, փոստ-հեռագրատունը, հայոց հոգևոր առաջնորդարանը, ծխական դպրոցը, գրադարան-ընթերցարանը, շուկան և այլն։

Քաղաքամիջում հերոսամարտը ղեկավարում էին Շուշանյան վարժարանի տեսուչ Հայկ Կոսոյանը, խանութպան Դ. Սարգսյանը, առևտրական Լ. Գալաճյանը, պղնձագործ Հ. Ներկարարյանը (Հարո), հոգևորական Եզնիկ վարդապետ Ներկարարյանը և ուրիշներ[49]։

Ի տարբերություն Այգեստանի, ուր հայերը հերոսամարտը վարում էին համեմատաբար մեծ թվով (23000 մարդ), Քաղաքամիջում կռվողների թիվը փոքր էր (3000 մարդ)։

Քաղաքամիջում իրադարձությունները սկսվեցին ու ծավալվեցին համարյա այնպես, ինչպես Այգեստանում։ Ապրիլի սկզբներին Զինվորական մարմինը, նախքան ռազմական գործողությունների դիմելը, փորձեց բանակցություններ

---

45 Օն. Մխիթարյան. նշվ. աշխ., էջ 203։

46 Տե՛ս Ա. Դարբինյան. նշվ. աշխ., էջ 329։

47 Анри Барби. Указ. соч., с. 76.

48 Օն. Մխիթարյան. նշվ. աշխ., էջ 209—210։

49 Տե՛ս Ա-Դո. նշվ. աշխ., էջ 265—266։ Ա. Ա. Կեորկիզյան. Վասպուրականի հերոսամարտը, 1915 ապրիլ 7—1915 մայիս 7. Բեյրութ, 1966, էջ 208։

վարել Ջևդեթ բեյի հետ, հույս ունենալով, որ թերևս հնարավոր լինի խաղաղ եղանակներով պահել ու պահպանել Վան-Վասպուրականի հայությունը։ Այդ նպատակով Եղնիկ վարդապետին ուղարկեց նրա մոտ։ Սակայն կուսակալը պատասխանեց խիստ տոնով և ավելացրեց. «Այս երկիրը կամ հային պիտի մնա և կամ թուրքին, երկուսի մեկտեղ բնակիլը այլևս անհնարին է»[50]։

Ջևդեթ բեյի այդ պատասխանից հետո Զինվորական մարմինը վճռականապես որոշեց դիմել ինքնապաշտպանության։ Թուրքական ահռելի ուժի դեմ նա ուներ 100 հրացան՝ 30 հազար փամփուշտով և 210 ատրճանակ՝ 30 հազար փամփուշտով, ընդամենը 310 զենք՝ 60 հազար փամփուշտով[51]։

Ապրիլի 7-ի առավոտյան թշնամին, հարձակման անցնելով Այգեստանի վրա, մի քանի ժամ հետո կռիվ սկսեց նաև Քաղաքամիջի դեմ։ Նա ձգտում էր գրավել հայկական դիրքերը, սակայն հայերը արիաբար պաշտպանեցին դրանք։ Գազազած հակառակորդը սկսեց ռմբակոծել Քաղաքամիջի խաղաղ տները։ Բնակիչները սկզբում շվարեցին, նույնիսկ խուճապի ենթարկվեցին, բայց շուտով «խոլական խոյանքով մը դուրս եկան կռվի դավադիր թշնամու դեմ հանդիման»[52]։ Հայերը ոչ միայն ետ շպրտեցին թուրքերին, այլև փորձեցին գրավել նրանց հիմնարկներից մեկը։ Այդ գործում ակտիվ դեր խաղացին նաև կանայք։ Քառասունամյա Աղավնի Վարդապետյանը, արհամարհելով մահը և բախտի կամքին թողնելով իր վեց երեխաներին, առաջնորդեց հայ մարտիկներին դեպի թշնամու դիրքերը, փորեց ու ճամփա բացեց նրանց համար, ոգևորելով՝ «դեհ ձեզ մատաղ տղաներ, շուտ-շուտ»[53]։ Հերոսամարտի ղեկավար Հ. Կոսոյանը հետագայում գրում էր. «Կռվի ընթացքին Քաղաքամեջն ունեցավ ուրիշ շատ տղավնիներ, որոնք մինչև վերջ անբաժան մնացին մեզնից, բաժանելով զրկանքն ու արյունը»։ Հայ ռազմիկներն իրենց դիպուկ կրակոցներով կետին էին տապալում թշնամու զինվորներին, սպանում թնդանոթաձիգներին և լռեցնում նրանց հրանոթները։ Աչքի ընկավ հատկապես Ավետիս Վարդապետյանը, որը անգամ վիրավոր չէր ուզում լքել ռազմադաշտը։ «Ախ մի առեք հրացանս,— ասում էր նա իր զինակիցներին,— բարձրացուցեք զիս, կրակել կուզեմ»։ Եվ այդպես անձնուրաց էին կռվում հերոսամարտի մյուս մասնակիցները, որի հետևանքով հայերի շարքերում չէր լինում «ոչ մեկ հուսաբեկություն»[54]։

Այնուամենայնիվ շարանենգ թշնամին ձգտում էր հաջողության հասնել։ Թուրք սպաները զինվորներին ոգևորում էին օսմանյան պետական ու զինվորական անցյալի գործիչների խիզախ արարքներով, բանակալների փառքով, կրոնական մոլեռանդությամբ, «սալավաթ» էին կանչում ու գրոհի կոչում, սակայն արդյունքի չէին հասնում։ Նրանք բախվում էին հայոց աննկուն պատնեշներին ու խորտակվում։ Կռվի առաջին օրը հակառակորդից սպանվեցին 60, վիրավորվեցին 80 զինվոր, իսկ հայերից վիրավորվեցին միայն 4 զինվոր[55]։

Կատաղի մարտերը շարունակվեցին նաև ապրիլի 7-ի գիշերը։ Զինվորական մարմինը որոշեց հրկիզել հակառակորդի հիմնարկությունները, հատկապես զորանոցներն ու զինապահեստները։ Եվ քաջարի մարտիկները սկսեցին իրագործել այդ որոշումը։ Իր հերոսական արարքներով հռչակվեց հատկապես 16-ամյա Արամ Կապարուկյանը, որը «զարմանալի անվախությամբ» այրեց Ճիտեեյանի խանը, ուր դիրքավորվել էին Ջևդեթ բեյի զինվորներն ու քրդերը, ապա՝ ոստիկանատունը, այնուհետև՝ կենտրոնական դատարանի շենքը[56]։ Կարապետ և Մարտիրոս Մուրադյանները հրկիզեցին փոստ-հեռագրատան շեն-

---

50 Ա-Դ ո. նշվ. աշխ., էջ 273։

51 Նույն տեղում, էջ 271։

52 Վասպուրական..., էջ 45։

53 Նույն տեղում, էջ 45։

54 Նույն տեղում, էջ 46։

55 Նույն տեղում, էջ 46—47։

56 Նույն տեղում, էջ 47։ Ա-Դ ո. նշվ. աշխ., էջ 284—285։

ջը[57]։ Թուրքական հրոսակները այրվեցին բոցերի մեջ, իսկ ովքեր փորձեցին ազատվել փախչելով, ընկան հայերի գնդակներից։ Այդ նույն գիշերվա ընթացքում հայ մարտիկները հրկիզեցին նաև Բանկ-Օտտոմանի և կառավարչատան շենքերը։ Այրվեց ու մոխիր դարձավ թուրքական բռնապետության սիմվոլը՝ օսմանյան պետական դրոշակը։ Այդպիսով, «թշնամին,— գրում էր Հ. Կոսոյանը.— մեկ գիշերվա մեջ կորցրեց իր ուժեղագույն դիրքերը»[58]։ Ջևդեթ բեյը ստիպված էր խոստովանվել, որ «կառավարության նամուսը քաղաքի մեջ կործանվեց»։

Հերոսամարտի երկրորդ օրը հայերը պայթեցրին պետական զինվորական պահեստը և թշնամու մի շարք դիրքեր։ «Կրակե գոտին,— շարունակում է Հ. Կոսոյանը,— բռնեց քաղաքի շուրջը կարմիր երիզով»[59]։ Խնդիր դրվեց այրել նաև կուսակալի որջը։ Այդ էլ կատարվեց։ Թշնամին նահանջում էր։ Հայերը գրավեցին նրանից 20 հազար փութ ցորեն, 700 փութ ալյուր, Ռեժիի աղի շտեմարանները և այլն։ Ըստ էության հայերը տեր էին դարձել ամբողջ Քաղաքամիջին։

Ուշագրավ է, որ հակառակորդը, հենվելով իր գերազանց ուժի վրա, ձեռնարկում էր անկազմակերպ գրոհներ, իսկ հայերը, ցուցաբերելով համախմբվածություն ու կազմակերպվածություն և ազատագրվելու ու ապրելու անսասան կամք, հաջողությամբ հարվածում ու ջախջախում էին նրան։ Երբեմն հայ զինվորները մենակ կամ մի քանի հոգով փախուստի էին մատնում թշնամու շատ զինվորների, «ցույց տալով քաջության օրինակներ»[60]։

Ապրիլի 10-ին թշնամին սաստկացրեց կրակը։ Սակայն հայերը արիաբար դիմադրում էին։ Այնուամենայնիվ թշնամին ճնշում էր։ Մինչև գիշերվա ժամը 1-ը նա կարողացավ հայերից գրավել 2 դիրք, տալով տասնյակ զոհեր։

Ապրիլի 11-ին հակառակորդը նոր հարձակում ձեռնարկեց, բայց ետ շպրտվեց։ Զինվորական մարմինը դիմեց մարտիկներին, պահանջելով՝ ամրապնդել կարգապահությունը, լինել ավելի կայուն ու խիզախ, խնայել թե՛ կյանքը և թե՛ փամփուշտը, չարձակել ոչ մի գնդակ՝ «առանց նպատակի»[61]։ Որքան էլ այդ կարգադրությունը կատարվում էր, բայց զենքի ու փամփուշտի կարիքը խստորեն զգացվում էր։ Եվ առանձին անհատներ սխրագործությամբ էին դրանք ձեռք բերում։ 16-ամյա Արմենակ Սարգսյանը, նետվելով կրակների մեջ, բերեց թշնամու զոհված զինվորների հրացաններն ու փամփուշտները։

Քաղաքամիջի հայերը փորձեցին կապվել Այգեստանի հետ։ Տեսնելով, որ սուրհանդակներով անհնար է, սկսեցին փորել գետնուղի։ Այդ գործի մասնագետ Բնա Սիմոնը 10 օր աշխատեց և քիչ էր մնում, որ հասներ նպատակին, բայց թշնամու պատահական արկը, պայթելով արդեն պատրաստի գետնուղու վրա, խափանեց նրա ձեռնարկումը։ Այնուամենայնիվ, դա խիզախ մտահղացում էր, անձնուրաց ու համարձակ կենսագործում։

Ապրիլի 17-ին Ջևդեթը սաստկացրեց ռմբակոծումները։ Բայց հայերը շարունակում էին արիաբար պաշտպանվել ու հակահարվածել հակառակորդին։ Մեծերի հետ մեկտեղ հերոսամարտում գործուն դեր էին խաղում նաև երեխաներն ու պատանիները։ Ինչպես Այգեստանում, այնպես էլ այստեղ նրանք նետվում էին թշնամու հենց նոր գցած ու դեռ չպայթած ռումբի վրա, վնասազերծում էին այն և տանում զինագործների մոտ, որոնք նրա վառոդից պատրաստում էին փամփուշտներ։ «Ոհ,— գրում էր Հ. Կոսոյանը,— որքան արիություն ցույց կուտային մեր այդ մատաղ հերոսները, թուշերը կարմիր, աչքերը կրակոտ, անհանգիստ կհետևեին ընկած գնդակներուն, որոնք օդի մեջ սև

57 Ա.-Դ ո. նշվ. աշխ., էջ 284—285։

58 «Վասպուրական»..., էջ 47։

59 Նույն տեղում, էջ 49։

60 Ա.-Դ ո. նշվ. աշխ., էջ 286։

61 Նույն տեղում, էջ 287։

թռչունի մը պես նկատելի՝ վար կիյնային»[62]։ Հերոսամարտի մասնակիցները հիացմունքով էին նշում 10—15 տարեկան պատանիներ Բաբկեն Իսաջանյանի, Մարտիրոս Գեոլոշյանի, Հովհաննես Ազգասերյանի, Ասլան Ասլանյանի, Ծուռ Անուշի մանչու՝ Ոստանիկի, Ուռուսի և ուրիշների անունները[63]։

Ապրիլի 19—20-ին թշնամին ավելի ուժեղացրեց ռմբակոծումը։ Նա օրական թափում էր շուրջ 500 ռումբ և ավերում հայերի դիրքերն ու ամրությունները։ Միաժամանակ սաստկացնում էր հրացանային կրակը։ Բայց հայերը հակառակորդի քանդած ամրություններն ու դիրքերը կրկին վերականգնում էին ու արիաբար պաշտպանվում։

Ապրիլի 20-ին մի սպա խրամատից, առանց հայտնվելու, դիմեց հանրահայտ հայդուկ, անվրեպ կրակող Շատախցի Ավոյին, ասելով, որ Ջևդեթ բեյի անունից ինքն ուզում է իմանալ, թե ինչ են պահանջում հայերը։ Ավոն նրան պատասխանեց, որ ինքը սարի մարդ է, դա կարող են ասել հայոց հոգևոր ու կուսակցական ղեկավարները։ Երբ սպան համառեց և ցանկություն հայտնեց գոնե տեսնել նրա երեսը, Ավոն հայտարարեց. «Էսօր մեր նամուսի համար թվանք ձեռքիս կկռվիմ, մեր օլուղ չոճուղ չենք թողներ, որ անամոթաբար մնան ձեր ձեռքը», «խաղաղություն չկա, քանի Ջևդեթ կա, կուզեմ անոր գլուխը, հասկցա՞ր»[64]։

Դժվար է ասել, թե սպան իրոք վարում էր այդ խոսակցությունը Ջևդեթ բեյի հանձնարարությամբ։ Բայց հայտնի է, որ ապրիլի 21-ին կուսակալը երկու հայ կանանց միջոցով նամակ ուղարկեց Զինվորական մարմնին, որով պահանջում էր զինաթափվել ու հանձնվել, այլապես սպառնում էր կոտորել։ «Եթե առաջարկներս չընդունեք,— գրում էր նա,— այսօր Գյավաշեն եկող հրետանիները հոս հասնելուն պես, ամբողջովին քաղաքի վրա պիտի ուղղեմ և ողջ քաղաքը տակն ու վրա պիտի ընեմ»։ Գթացեք գոնե ձեր ընտանիքներին։ «... ձեզի փրկություն չկա»[65]։

Հայերը, սակայն, չահաբեկվեցին Ջևդեթ բեյի սպառնալիքներից, չհավատացին նրա կեղծ խոստումներին և որոշեցին կռիվը շարունակել մինչև վերջին մարդը, մինչև վերջին փամփուշտը։ Ապրիլի 22-ին կուսակալը կրկնեց իր պահանջները, բայց դարձյալ մերժում ստացավ։ Այն ժամանակ նա գործի դրեց թնդանոթները և սկսեց անխնա ռմբակոծել Քաղաքամեջը։ Ծուխն ու փոշին պատեցին երկինքը և փակեցին արևի ճամփան։ Վառոդի հոտը տարածվեց ամենուր։ Սակայն հայերը մնացին իրենց դիրքերում և հերոսաբար դիմագրավեցին։

Անհաջողության մատնված Ջևդեթ բեյը փորձեց այստեղ էլ կատարել այն, ինչ Այգեստանում, այն է՝ գավառներից հավաքած տարաբախտ հայերին (500 մարդ) քշեց դեպի Քաղաքամեջ, նպատակ ունենալով պաշարվածների մեջ առաջացնել սով ու տարափոխիկ հիվանդություններ։ Բայց նրա ձգտումներն այստեղ էլ անցան ապարդյուն։

Մայիսի սկզբին ռուսական զորամասերի ու հայ կամավորական գնդերի առաջխաղացման հետևանքով Ջևդեթը սկսեց թողնել ինչպես Այգեստանի, այնպես էլ Քաղաքամիջի պաշարումը և բռնել փախուստի ուղին։ Փախուստից առաջ նա տանջամահ արեց ու գնդակահարեց ձերբակալված ու Վանի բանտում փակված հայերին։

Պաշարումից ազատված հայերը սկսեցին հետապնդել թշնամուն և այրել նրա ամրոցները։ Նրանք մոխիր էին դարձնում 600 տարվա բռնակալության հիշատակները և հռչակում իրենց ազատությունը։ Սահակ Ճանկոյանը բարձրացավ Վանա նշանավոր բերդի գագաթը, վայր շպրտեց դարերից ի վեր բռնության սիմվոլ հանդիսացած թուրքական դրոշակը և նրա փոխարեն ամրացրեց ազատության դրոշակը։

---

62 Հ. Կոսոյան. նշվ. աշխ., էջ 121։

63 Տե՛ս նույն տեղում։

64 Նույն տեղում, էջ 125։

65 Նույն տեղում, էջ 125։

Մայիսի 4-ին Այգեստանի ու Քաղաքամիջի հերոսամարտերի մասնակիցները հանդիպեցին իրար։ Նրանք շնորհավորեցին միմյանց համառ պայքարով ու զոհերի գնով ձեռք բերած հաղթանակը։ Ուրախությունը համաժողովրդական էր։ Ճառով հանդես եկավ Փանոս Թերլեմեզյանը և ասաց. «Ողջույն քաղաքացի հերոս ժողովրդին, պարծանք բոլոր կռվողներուն, որոնք խիզախորեն կուրծք տվին թշնամուն և հաղթանակեցին։ Մենք բերեր ենք ձեզ Այգեստանի ձեր զինակից ընկերներու համբույրն ու հիացմունքը։ Երկու տեղն ալ փառքով հաղթանակեցինք, թշնամին անզոր ու խայտառակված փախավ։ Ռուսական բանակը՝ կամավորներու առաջնորդությամբ... մտած է երկիր։ Չխորհինք, թե զենքը վար պետք է դնել։ Ոչ, այժմ ավելի քան առաջ պատրաստ պետք է գտնվինք հավանական բոլոր ռնակնկալներու հանդեպ։ Փախչող թշնամին հեռու չէ, կարող է վերադարձի և հարձակման փորձեր ընել»[66]։

Շուտով Քաղաքամեջ եկան հայ կամավորական խմբերի ու ռուսական զորամասերի հրամանատարները։ Գեներալ-մայոր Նիկոլաևը զարմացավ, երբ տեսավ հայերի կառուցած դիրքերն ու ամրությունները։ Նա հարցրեց. «Արդյո՞ք ձեր շարքերու մեջ զինվորական ամրության կառուցման մասնագետներ եղած են։ Որովհետև այս դիրքի ներկա վիճակը (նկատի ուներ Թեքալիֆ-Հարբիեի ամրոցը—Ա. Հ.), անոր նկուղային ամրացումը, շատ կողմերով կհիշեցնե Փորթ-Արթուրի բերդային ամրության, Մանջուրիո մեջ»։ Երբ պատասխանեցին՝ ոչ, դա ստեղծվել է կռվի պայմանների թելադրանքով, գեներալը չհավատաց, ասելով՝ «դա չի կարող լինել... վասնզի փորձառու հմուտ մասնագետի գործ կնմանի ներքին ամրացումը»։ Կրկին հարցուփորձից հետո գեներալը, երբ համոզվեց, որ ամրոցները, իրոք, հայերն են կառուցել իրենց հնարամտությամբ, գովեց նրանց[67]։

Ամբողջ կռիվների ընթացքում թշնամին արձակեց հայերի վրա մոտ 16 հազար հրանոթային արկ, որից 10 հազարը՝ Քաղաքամիջում, 6 հազարը՝ Այգեստանում[68]։ Ինչ վերաբերում է զոհերին ու վիրավորներին, ապա նրանց թվաքանակի մասին կան տարբեր տեղեկություններ։ 1915 թ. մայիսի 31-ին Վանի իտալական հյուպատոսական գործակալը նշում էր, որ թուրքերը հայերից սպանել են մոտ 100 կին ու երեխա և մի քանի տղամարդ, իսկ իրենք գրոհներից միայն մեկի ժամանակ կորցրել են 60—70 մարդ[69]։ Ա-Դոն գրում էր, որ Քաղաքամիջում հայերից սպանվել են 43 և վիրավորվել 71 մարդ, իսկ Այգեստանում նրանց թիվը «անհամեմատ ավելի շատ էր»[70]։ Հ. Կոսոյանի տվյալներով, Քաղաքամիջում հայերից զոհվել են 34 (12-ը՝ զինվորներից, 22-ը՝ ժողովրդից) և վիրավորվել են 69 մարդ (16-ը՝ զինվորներից, 53-ը՝ ժողովրդից)[71]։ Ա. Եկարյանի վկայությամբ Այգեստանում հայերի կորուստները կազմել են մոտ 250 մարդ, որից 145-ը՝ կռվողներից[72]։ Թուրքերի կորուստների մասին լրիվ տեղեկություններ չունենք։

Համենայն դեպս, հայերի կորուստները քիչ էին։ Իրենց խիզախության և արիության շնորհիվ նրանք ոչ միայն աղատվեցին կոտորածներից, այլև փրկեցին գավառների հազարավոր գյուղացիներին, ապաստան տալով նրանց քաղաքում։ Ապրիլի 29-ի վիճակագրությունը ցույց տվեց, որ Վանի բնակչությունը արդեն հասել էր 70 հազարի, ավելացել էր զինվորների ու ամրաշին բանվորների քանակը, հրացանների ու փամփուշտների թիվը[73]։ Հ. Երամյանը գրում էր, որ վանեցիները ոչ միայն քաջաբար տարան կռիվը, այլև իրենց

---

66 Հ. Կոսոյան. նշվ. աշխ., էջ 162։

67 Նույն տեղում, էջ 175, 176։

68 Տե՛ս Геноцид армян..., с. 287; Анри Барби. Указ. соч., с. 75.

69 Տե՛ս Геноцид армян..., с. 287.

70 Ա-Դո. նշվ. աշխ., էջ 364։

71 Տե՛ս Հ. Կոսոյան. նշվ. աշխ., էջ 166—169։

72 Տե՛ս Ա. Եկարյան. նշվ. աշխ., էջ 228։

73 Տե՛ս Օն. Մխիթարյան. նշվ. աշխ., էջ 197։

մոտ տեղավորեցին ու կերակրեցին «40 000-ի չափ մերկ ու անոթի փախըստականներ»[74]։ Դա, անշուշտ, մեծ նվաճում էր։

Ինչո՞վ էր պայմանավորված այդ նվաճումը, որո՞նք էին վանեցիների հաղթանակի պատճառները։ Տեսնելով, որ թշնամին անողոք է ու դաժան, վարում է հայաջինջ քաղաքականություն, նրանք ընդունեցին ճիշտ որոշում՝ գերադասեցին պատվաբեր մահը անպատվաբեր ստրկությունից և հերոսաբար հանդես եկան թշնամու դեմ։ Նրանք լարեցին իրենց վերջին ուժերը, գործի դրեցին մարտական ու ստեղծագործական ողջ կարողությունները, ամբողջ եռանդը և ցուցաբերելով գերազանց կազմակերպվածություն ու կարգապահություն, կարողացան ոչ միայն պաշտպանվել, այլև հակահարված հասցնել ու ետ շպրտել հակառակորդին։

Վանեցիները կարողացան կարճ ժամանակամիջոցում համախմբվել, մի կողմ դնել կուսակցական ու անկուսակցական ներհակությունները, դառնալ մի հոգի, մի սիրտ, մի մարմին և միասնաբար կանգնել թշնամու դեմ։ Այդ բանում նրանց օգնեց 1896 թ. փորձը։ Նրանք չկրկնեցին անցյալի սխալները. այլևս չխաբվեցին օսմանյան ոճրագործների կեղծ խոստումներից և խիզախորեն շարունակեցին պայքարը. Քաղաքամեջը այժմ պասսիվ չմնաց, ընդհակառակը՝ արագորեն ոտքի կանգնեց և, թեև անկախ Այգեստանից, բայց նրա հետ միաժամանակ արիաբար դիմագրավեց թշնամուն։

Վանեցիների միավորմանը զգալիորեն նպաստեց ազգային ուժերի համախմբման այն պրոպագանդան, որ տասնամյակներ շարունակ վարում էին հայ հասարակական-քաղաքական տարբեր շրջանները, ազգի ճակատագրով մտահոգված գործիչները։ Տեղ-տեղ մարմնացում գտած այդ գաղափարը թեև խաթարվեց 1908 թ. հեղաշրջման կեղծ պատրանքներից, բայց և այնպես վերարթնացավ առաջին համաշխարհային սլատերազմի նախօրյակին և որոշ տեղերում, առաջին հերթին Վանում, կենսագործվեց պատերազմի օրերին։

Հերոսամարտի հենց սկզբից վանեցիները ընտրեցին կռվի ճիշտ ստրատեգիա, որոշելով հիմնականում պաշտպանվել և այդ նպատակով կառուցեցին ու վերակառուցեցին այնպիսի ամրություններ ու դիրքեր, որոնք կարող էին լինել փորձված ռազմական մասնագետների մտքի արգասիքները։

Հերոսամարտի մասնակիցներին ուժ ու եռանդ էր ներշնչում ռուսական զորամասերի ու հայ կամավորական խմբերի մոտալուտ ժամանման և օգնության հույսը։ Իրավ է, նրանք կտրված էին արտաքին աշխարհից, դեռ ոչինչ չգիտեին այդ մասին, բայց և այնպես տոկում ու սպասում էին։ Վերջին հաշվով, ռուսական ուժերը լուծեցին գլխավոր հարցը, նրանք փրկեցին սովահարության ու կործանման դատապարտված պաշարվածներին։

Վանի հերոսամարտը մի գեղեցիկ էջ է հայ ժողովրդի պատմության մեջ։ Այն բարձրացրեց հայ ժողովրդի պայքարի ոգին և ցույց տվեց, որ նա գիտի պաշտպանել իր մարդկային ու ազգային արժանապատվությունը, դերադասում է մեռնել պատնեշների վրա, քան հանձնվել հակառակորդի ողորմածությանը։ Այն ապացուցեց, որ կարելի է փրկվել անգամ ահեղ թշնամու կոտորածներից, եթե համախմբվեն, միավորվեն, կազմակերպվեն ու վճռական պայքար վարեն նրա դեմ։ Վանեցիների օրինակը թերևս օգնեց արևմտահայերին, որ նրանք երկրի մի շարք շրջաններում ևս ակտիվ կերպով դիմագրավեն թուրքական ջարդարարներին ու որոշ չափով ապատվեն բնաջնջումից։ Վանի հերոսամարտի շնորհիվ կոտորածներից փրկվեցին 150 հազարից 200 հազար հայեր, որոնց մեծ մասը, հաստատվելով Արևելյան Հայաստանում, հետագայում դարձավ Սովետական Հայաստանի սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցը։

---

[74] Հ. Երամյան. Հուշարձան Վան-Վասպուրականի. հ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 324։

ГЕРОИЧЕСКОЕ СОПРОТИВЛЕНИЕ ВАНА В 1915 ГОДУ

Доктор ист. наук А. С. АМБАРЯН

Резюме

Весною 1915 г., когда правительство младотурков начало массовое избиение армян в Османской империи, население города Вана, объединившись, с 7 апреля по 5 мая 1915 г. оказывало погромщикам организованное сопротивление. Благодаря этому сопротивлению и своевременной помощи русской армии и армянских добровольческих отрядов оно спаслось от неминуемого физического уничтожения. Героическое сопротивление Вана—одна из ярких страниц в многовековой истории освободительной борьбы армянского народа.